Ո՞ւմ հետևել Ջոզեֆ Սմիթից հետո

Իր մահից առաջ Մարգարե Ջոզեֆ Սմիթը Տասներկու Առաքյալների Քվորումին ուսուցանեց հետևյալը.

> Եղբայրներ, . . . կարևոր իրադարձություններից մի քանիսը շուտով կիրականան: Հնարավոր է, որ իմ թշնամիներն ինձ սպանեն: Եվ եթե բանալիներն ու զորությունը, որոնք ինձ մոտ են, չտրվեն ձեզ, նրանք կկորչեն երկրից: Բայց եթե ինձ հաջողվի դրանք փոխանցել ձեզ, ապա թույլ տվեք դառնալ մարդասպանի ձեռքի զոհը, եթե Աստված դա թույլ տա. ես կարող եմ հաճույքով և գոհունակությամբ հեռանալ, իմանալով, որ իմ գործն ավարտված է և հիմքը դրված է, որի վրա պետք է վեր խոյանա Աստծո արքայությունը՝ ժամանակների լրության այս տնտեսության մեջ:
>
> Այսուհետ Տասներկուսի Առաքյալների ուսերին պետք է դրվի այս եկեղեցին առաջնորդելու պատասխանատվությունը, մինչև որ դուք ուրիշներին կնշանակեք որպես ձեր իրավահաջորդ: (*Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 533–34)

Ջոզեֆ Սմիթը նաև ուսուցանեց, որ Առաջին Նախագահությունը Տասներկու Առաքյալների Քվորումից վեր միակ խումբն է, սակայն երբ մարգարեն մահացավ, Առաջին Նախագահությունը լուծարվեց (տես History, 1838–1856 [Manuscript History of the Church], volume B-1, 691, josephsmithpapers.org):

- **Ձեր սովորածից ի՞նչը կօգնի ձեզ արձագանքել նախկինում արված երեք պնդումներին:**
- **Մարգարեի մահվան դեպքում Տերը ի՞նչ կարգ է հաստատել՝ Իր Եկեղեցու ղեկավարությունը շարունակելու համար:**

Երբ Բրիգամ Յանգը դիմեց Սրբերին մեծ ժողովի ժամանակ, շատերը զարմանահրաշ զգացողություն ունեցան՝ զգալով Սուրբ Հոգու հաստատումը:

Նախագահ Ջորջ Ք. Քենոնը (1827–1901), որը հետագայում ծառայել է Առաջին Նախագահությունում, կիսվել է.



> Բրիգամ Յանգը . . . վեր կացավ և դիմեց ժողովրդին: . . . Ով ներկա է եղել այդ իրադարձության ժամանակ, երբեք չի կարող մոռանալ իր վրա թողած տպավորությունը: Եթե Ջոզեֆը հարություն առներ մեռելներից և նորից խոսեր նրանց հետ, ազդեցությունը չէր կարող ավելի ցնցող լինել, քան այն ազդեցությունը, որը թողեց այդ ժողովը այնտեղ ներկա գտնվող մարդկանց վրա: Դա հենց Ջոզեֆի ձայնն էր. և լսվում էր ոչ միայն Ջոզեֆի ձայնը, այլ մարդկանց աչքին թվում էր, թե իրենց առջև կանգնած է հենց Ջոզեֆը: Այդ ժողովի ժամանակ տեղի ունեցավ հրաշալի և զարմանահրաշ մի իրադարձություն, որի մասին մենք երբեք չէինք լսել: Տերն Իր ժողովրդին տվեց մի վկայություն, որը կասկածի տեղիք չէր տալիս, թե ով էր այն մարդը, ում Նա ընտրել էր՝ իրենց առաջնորդելու համար: Նրանք իրենց աչքերով և ականջներով տեսան ու լսեցին. այդ ժամանակ ասված խոսքերը՝ Աստծո համոզիչ զորությամբ հասան նրանց սրտերին և նրանք լցվեցին Հոգով և մեծ ուրախությամբ: Մինչ այդ կար ընկճվածություն և, հավանաբար, որոշ մարդկանց սրտերում՝ կասկած և անորոշություն, սակայն հիմա բոլորի համար պարզ էր, որ այստեղ կանգնած է այն մարդը, որին Տերը շնորհել է անհրաժեշտ իշխանություն՝ գործելու նրանց մեջ Ջոզեֆի փոխարեն (Ջորջ Ք. Քենոն, «Joseph Smith, the Prophet,» *Juvenile Instructor*, հոկտեմբեր 1870, 174–75):

Եկեղեցու անդամ Էմիլի Սմիթ Հոյթը, որը ներկա էր, երբ Բրիգամ Յանգը դիմում էր Սրբերին, գրել է հետևյալը.

> Հիմնավորումներ անելու եղանակը, դեմքի արտահայտությունը, ձայնի ելևէջը հուզեց ինձ մինչև հոգուս խորքը: Իմ աչքերը տեսել էին Ջոզեֆի սպանված մարմինը: Իմ ձեռքերով զգացել էի մահվան սառնությունը նրա ազնվազարմ ճակատի վրա: Ես գիտեի, որ Ջոզեֆը մահացել է: Սակայն ես ապշահար էի և ակամայից նայում հարթակին, որպեսզի տեսնեի, թե արդյո՞ք դա Ջոզեֆը չէր: Դա այդպես չէր, դա Բրիգամ Յանգն էր և, եթե որևէ մեկը կասկածում է Սրբերի գործերը ղեկավարելու Բրիգամի իրավունքին, ես նրանց միայն սա պետք է ասեմ: Ստացեք Աստծո Հոգին և ինքներդ իմացեք: Տերը հոգ կտանի իր մարդկանց համար (Էմիլի Սմիթ Հոյթ, Լին Վ. Յորգենսենի «The Mantle of the Prophet Joseph Passes to Brother Brigham: A Collective Spiritual Witness» գրքում, *BYU Studies*, vol. 36, no. 4 [1996–97], 164):

- **Եթե դուք այնտեղ լինեիք, ինչպե՞ս կարող էր այս փորձառությունն ազդել ձեզ վրա:**
- **Ինչպե՞ս է Մորոնի 10.5 հատվածը կապված ձեր ուսումնասիրածի հետ:**

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_472-1